ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1932 – Դեկտեմբեր – թիւ 12

էջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թորոսեան Հ. Յ. — Հ. Արսէն Սիւքրի 517

Սեթեանց Յ. Մեսրոպ. — Հայք ի Շանտերնակոր (Թրգմ. անգլիերէնէ Քաջարենց Հրաչ) 524

Կիւրեղեան Բրոֆ. Լէոն. — Վիրգիլեան ծառը 531

Փէյիկեան Հ. Եղիա. — Ջուղայեցի Անտոն Դպրի պատմական յիշատակարան մը. 536

ԳՐԱԿԱՆ

Վասգէն - Կորիւն. — Գրականութիւնը մշակողներ և ընթերցողներ . . . 543

Կուէրրինի. — Ցիշէ՛ մի մոռնար (Թրգմ. Հ. Թ. Թոմաճան) 546

Դաւիթեան Յ. — Հ. Արսէն Ղազիկեան 547

Սօֆեան Վահրամ. — Մեդուսա - Սփոփանք 547

Քաջարենց Հրաչ. — Ուշագիր որբին . 548

Գույումճեան Յակոբ. — Աշնանային . 549

Փէյիկեան Հ. Եղիա. — Ծննդեան գիշեր. 562

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Երեմեան Հ. Սիմոն. — Գրական շաբաթում. Բալինտարանաթ Թակորի «Տուն և Աշխարհ». «Բալու». «Արծանական». Գափամաճեան «Տարեցոյց» 1933. . . 550

Քիւրտեան Յ. — «Պատմութիւն Երուսաղէմի» Տիգրան Հ. Թ. Սաւալանեանցի . 551

ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ

Գէօթէ. — Գէօց ֆոն Բերլիխինգէն (թրգ. Յակոբ-Գրիգոր) 533

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. Վ. Յ. — Ֆրանսահայ հոգեկ հանդէս մը Ս.-Մուրատեան Վարժարանին մէջ (Սեւրֆարիզ) 559

Խոր. — Խորէն Արքեպս. Մուրատբէգեան կաթողիկոս ամենայն հայոց . . . 563

SOMMAIRE

1932 – Décembre – numéro 12

p.

PHILOLOGIE

Thorossian P. J. – P. Arsène Soukri 517

Setiantz J. Mesrovb. — Les arméniens à Chandernagor (trad. par. Katcharentz Hratch) 524

Gurékian Prof. Léon. — L'Arbre Virgilien 506

Paitchikian P. Elie. — Un mémorial historique (XVIIe siècle) d'Antoine de Djoulpha-Ispahan 535

LITTERATURE

Vasken - Goriun. — Ecrivains et lecteurs 543

Guerrini. — Souviens toi! (poésie trad. par Tomadjan P. T.) 546

Davidian J. — P. Arsène Ghazikian (poésie) 547

Sofian Vahram. — Medusa - Soulagement (poésie) 547

Katcharentz Hratch. — Attention à l'orphelin (poésie) 548

Couyoumdjian J. — Autumnal. . 549

Paitchikian P. E. — Minuit de Noël 562

RECENSIONS

Erémian P. S. — Mouvement littéraire 550

Kurdian H. — «Histoire de Jérusalem» de Tigran H. T. Savalaniantz . 551

THÈATRE

Goethe. — Gœtz de Berlichingen (trad. par Hagop-Krikor) 533

ECHOS d'ARMÉNIE

H. P. V. — Une fête solennelle franco-arménienne dans le Collège S.-Moorat (à Sèvres) 559

Réd. — L'Archevêque Khorène Mouradbeghiau élu Catholicos des arméniens à Etchmiadzine 562



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1932

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 12

ՀԱՏ. Դ. ՌՈՅԱԼ-ՌՈՅԱԼ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԱՐՍԷՆ ՍՈՒՔՐԻ

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. տես «Բազմավէպ» 1932, էջ 343)

Հ. Սուքրիի՝ հայ լեզուին և մատենագրութեան ունեցած խոր հմտութեան նագրութեան ունեցած խոր հմտութեան անվիճելի ապացոյցներ են, անոր ներկայացնէ՝ իր խոշոր գիծերուն մէջ՝ մեր հայ գրականութեան ընդհանուր պատկերը, Հինգերորդէն մինչեւ Երկոտասաներորդ դարը։ Այն յօդուածները սկսած է հրատարակել 1875ի «Բազմավէպ»ին մէջ, մինչ հազիւ աւարտած զպրոցական շրջանը՝ իր գրական թռիչներուն նախկին փորձն էր որ կ'ընէր։ Այդ յօդուածներուն առաջինն է, «Մեսրոպեան դար հայկական լեզուի»[1], որուն մէջ յետ պանծացնելու Մաշթոց Վ.ի գործունէութեան գերակշիռ արժէքը եւ արդիւնքը, իբր հիմնադրի մեր ազգային գրականութեան, կը շօշափէ այն բոլոր մատենագրական խնդիրները, որոնք մինչեւ այսօր տակաւին վիճաբանութեան նիւթ կը կազմեն բանասէրներուն մէջ, որոնց մասին համեստօրէն՝ բայց ո՛չ նուազ հեղինակօրէն՝ կը յայտնէ իր որոշ կարծիքները, որոնք 56 տարի վերջը կը պահեն դեռ իրենց այժմէութիւնը։ Բնականաբար, Մաշթոցի անունը սերտիւ կապուած ըլլալով մեր հայ գրերու գիւտին հետ, քննութեան առարկայ կ'ընէ այն հարցը, թէ իրապէս Մաշթոցէն առաջ գոյութիւն չունէ՞ն հայ

1. «Բազմավէպ», 1875, էջ 7–16.

digitised by A.R.A.R.@